**ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2**
**« 26 » փետրվարի 2020թ.-ին կնքված N «ՎԱԱՏ-ՀՄԱԾՁԲ-20/1-1» ծածկագրով՝**
**Պետության կարիքների համար հանրային հեռախոսային ծառայությունների մատուցման պետական գնման պայմանագրի**

ք.Երևան «27» 01 2021թ.

Վարչապետի աշխատակազմ, ի դեմս պատշաճ կարգով լիազորված անձ, վարչապետի աշխատակազմի գործերի կառավարիչ Վ. Պապիկյանի, (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, «ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ն, ի դեմս պատշաճ կարգով լիազորված անձ (թիվ 00229/20 լիազորագիր տրված 07.12.2020թ.-ին) Կարեն Ասատուրյանի (նույնականացման քարտ 000509638, տրված 11.02.2013թ., 004-ի կողմից), որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, և Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմինը, ի դեմս մարմնի ղեկավար Հ. Ավագյանի (այսուհետ՝ Ծառայություն ստացող), երեքը միասին՝ կողմեր, հիմք ընդունելով «ՎԱԱՏ-ՀՄԱԾՁԲ-20/1-1» ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 7.5 և 7.14 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

## *1. Համաձայնագրի առարկան*

1.1 Հաշվի առնելով, որ 2021թ. պետական բյուջեով համապատասխան ծառայությունների մատուցման նպատակով հատկացվել է 456000 (չորս հարյուր հիսունվեց հազար) ՀՀ դրամ՝ Կողմերը փոխադարձ համաձայնությամբ որոշեցին հաստատել ֆինանսական պարտավորությունները և վճարման ժամանակացույցը՝ համաձայն սույն համաձայնագրի հավելված N 1-ի:

1.2 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և տարածվում 2021թ-ի հունվարի 1-ից կողմերի միջև ծագած հարաբերությունների նկատմամբ և գործում է մինչև 2021թ-ի դեկտեմբերի 31-ը:

## 2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագրի պայմանները կիրառվում են մինչև Համաձայնագիրն ուժի մեջ մտնելը կողմերի միջև փաստացի ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում մինչև Համաձայնագիր կնքելը կատարողի կողմից մատուցված ծառայության դիմաց վճարումը իրականացվում է այդ Համաձայնագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու դեպքում:

2.2 Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.3 Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.4 Համաձայնագրում չնշված՝ Պայմանագրով ստանձնած Կողմերի իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.5 Համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է երեք օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի N 1 հավելվածը հանդիսանում է Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է Համաձայնագրի մեկ օրինակ:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ | ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ |
|---|---|---|
| Վարչապետի աշխատակազմ<br>ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1<br>ՀՀ ՖՆ գործառնական վարչություն<br>ՀՀ 900011024057<br>ՀՎՀՀ 02505554 | «ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ<br>ք. Երևան, Ազատության 24/1<br>«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ<br>ՀՀ 163004038879<br>ՀՎՀՀ 02500052 | Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին<br>ք. Երևան, Ա. Արմենակյան փող. 129<br>ՀՎՀՀ 00481699 |
| ---------------------<br>/ստորագրություն/<br>Կ.Տ | ---------------------<br>/ստորագրություն/<br>Կ.Տ | ---------------------<br>/ստորագրություն/<br>Կ.Տ |

Հավելված **N 1**
« 26 » փետրվարի 2020թ. կնքված
ՎԱԱՏ-ՀՄԱԾՁԲ-20/1-1 ծածկագրով պայմանագրի
« 27 » 01 2021թ. կնքված N 2 Համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2021 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| **1** | **64211100-1** | հանրային հեռախոսային ծառայություններ | **91200** | **91200** | **91200** | **200640** | **200640** | **200640** | **319200** | **319200** | **319200** | **456000** | **456000** | **456000** | **456000** |

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*
*** վճարումները կիրականացվեն փաստացի մատուցված ծառայությունների դիմաց*

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
Վարչապետի աշխատակազմ
ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
ՀՀ **900011024057**
ՀՎՀՀ **02505554**
-------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**ԿԱՏԱՐՈՂ**
«Տելեկոմ Արմենիա» ՓԲԸ
ք. Երևան, Ազատության 24/1
«ՀայԷկոնոմբանկ» ԲԲԸ
ՀՀ **163004038879**
ՀՎՀՀ **02500052**
-------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ

**ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ ՄՏԱՑՈՂ**
Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմին
ք. Երևան, Ա.Արմենակյան փող. **129**
ՀՎՀՀ **00481699**
-------------------------------
/ստորագրություն/
Կ.Տ